ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1474

20.10.2014թվ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 4186
21. 10. 2014

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ Ոստիկանության Քննչական դարաշրջան
Մուտքի թիվ 8149
21. 10. 2014թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ սույն թվականին հոկտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Թալինի ՃՊՎ արձանագրել է, որ սեպտեմբեր ամսին արձանագրված թերությունները, որոնք վարչակազմի հետ փոխհամաձայնության գալով, և հիմք ընդունելով Դիտորդական խմբի էթիկայի կանոնակարգի 4.2 կետը, պետք է վերացված լինեին, չի տվել իր արդյունքները, որովհետև ինչպես նախորդ այցելության ընթացքում, այնպես էլ այս այցելության ընթացքում արձանագրվել է.

1. Բուժսենյակի լվացարանը գտնվում էր կեղտոտ վիճակում:
2. Տեսակցության սենյակում տեղադրված է մեկ աթոռ հարազատների համար:
3. Լոգարանում տաք ջուրը բացակայում էր, ցնցուղը չէր գործում / վնասված էր/ :
4. Զուգարանում բացակայում էր հիգիենիկ թուղթը: / *կից ներկայացվում է լուսանկար – 3/*
5. Զբոսաբակում անհասկանալի պատճառներով տեղադրված էր ինչ որ աթոռ, որը ամրացված չէր :/ *կից ներկայացվում է լուսանկար – 1/*
6. Ավելացնենք նաև, որ տվյալ այցելության ընթացքում արձանագրվել է, որ ճաշասենյակում համապատասխան պահարանի դարակում գդալ – պատառաքաղները պահվում էին բացիթողի վիճակում, և տվյալ դարակում անվտանգության հանգամանքները հաշվի չառնելով առկա է ինքնաշեն մեծ դանակ: / *կից ներկայացվում է լուսանկար – 2/*

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

Դիտորդական խմբի կարծիքով տվյալ ՀՊՎ-ի վարչակազմի հետ համագործակցությունը և տեղում թերությունների վերացման ուղղությամբ կատարվող աշխատանքները ապարդյուն են:

Խնդրում ենք ուսումնասիրել փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2973 << 17 >> 11 2014թ.

Ձեր 24.09.2014թ. թիվ 2621/1474 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Արագածոտնի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Թալինի բաժնի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

1. Դիտորդների խմբի հաշվետվության 1-ին կետում նշված թերությունը վերացվել է:
2. ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի որևէ կետով սահմանված չէ, թե քանի աթոռ պետք է տեղադրված լինի տեսակցության սենյակում, այդ իսկ պատճառով սենյակում՝ հարազատների համար նախատեսված մասում տեղադրված է մեկ աթոռ, իսկ անհրաժեշտության դեպքում տրամադրվում են նաև լրացուցիչ աթոռներ՝ ըստ տեսակցության եկած անձանց թվաքանակի:
3. ՁՊՎ-ի լոգարանի ցնցուղը փոխարինվել է նորով, լոգարանում տեղադրված է ջրի բաք և ջրատաքացուցիչ, իսկ ՁՊՎ-ն ապահովված է տաք և սառը ջրով:
4. ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 26-րդ կետի համաձայն՝ ձերբակալվածներին հիգիենիկ թուղթ տրամադրվում է ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում, իսկ դիտորդների խմբի այցելության ժամանակ ՁՊՎ-ում պահվող անձ չի եղել:
5. ՁՊՎ-ի զբոսաբակում տեղադրված աթոռը ներկայումս հանվել է, քանի որ նախատեսված չէ ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին

կանոնակարգ>>-ով: Այն տեղադրված է եղել ՀՀ ՄԻՊ գրասենյակի աշխատակիցների առաջարկով՝ մարդասիրական սկզբունքներից ելնելով:

6. ՁՊՎ-ի սննդի տաքացման սենյակում տեղադրված պահարանում գտնվող դանակը ինքնաշեն չէ, այն գործարանային արտադրության է: ՁՊՎ վարչակազմին հանձնարարական է տրվել գդալները և պատառաքաղները պատշաճ կերպով պահել պահարանի դարակում: Հարկ է նշել, որ սննդի տաքացման սենյակ ՁՊՎ-ում պահվող անձինք մուտք չեն գործում և անվտանգությունն ապահովված է:

ՀՀ ոստիկանության շտաբ